Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.179

"The Modern Paradigm of Sovereignty in the Context of the Ideas of the Peace of Westphalia and the US Declaration of Independence" (comparative examination)

Anna Petrosyan
https://orcid.org/0009-0007-6528-5915
YSU, faculty of history, PhD student of the chair of World history
anna.petrosyan@ysu.am

Keywords: nation, identity, enlightenment, Westphalian world order, sovereignty, balance of power.

The North American colonies gained independence not only through military successes, but also through the processes of national identity formation and socio-cultural development that were characteristic of the first stage of the Industrial Age. The present article aims to illustrate this approach through a comparative examination of the "Westphalian ideology" and the "US Declaration of Independence". In short, we follow a research approach that sees direct connections between the American Revolution and the Westphalian ideology, emphasizing the sovereignty of a nation, its political and civil institutions, and the inalienable rights of members of the social community. The Westphalian model of international relations is noteworthy as a possible environment for the sovereign relations of nations. The founding fathers of the United States proceeded from this understanding, enriched by the achievements of the Enlightenment, from J. Locke to Montesquieu. In this light, the process of US independence is presented as a multi-vector process, which can be revealed only from the perspective of the ideological complex of its era. A comparative examination of the "Westphalian ideology" and the "U.S. Declaration of Independence" may thus serve as a key turning point in understanding the history of U.S. state formation.

«Ինքնիշխանության արդի հարացույցը Վեստֆալյան խաղաղության և ԱՄՆ անկախության հռչակագրի գաղափարների ծիրում» (համեմատական քննություն)

Աննա Պետրոսյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ

Հիմնաբառեր՝ ազգ, ինքնություն, լուսավորականություն, Վեստֆալյան աշխարհակարգ, ինքնիշխանություն, ուժերի հավասարակշռություն:

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 179-189.

Received: 15.09.2025
Revised: 16.10.2025
Accepted: 25.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

"The Modern Paradigm of Sovereignty in the Context of the Ideas of the Peace of Westphalia and the US Declaration of Independence" (comparative examination)

«Ինքնիշխանության արդի հարացույցը Վեստֆալյան խաղաղության և ԱՄՆ անկախության հռչակագրի գաղափարների ծիրում» (համեմատական քննություն)

Հյուսիսամերիկյան գաղութները անկախացան ոչ միայն ռազմական հաջողությունների, այլև ազգային ինքնության կայացման և ընկերային–մշակութային զարգացման այն գործընթացների ազդեցությամբ, որոնք ներհատուկ էին արդյունաբերական դարաշրջանի առաջին շրջափուլին: Ներկա հոդվածը խնդիր ունի լուսաբանելու այս մոտեցումը «Վեստֆալյան գաղափարաբանության» և «ԱՄՆ անկախության հռչակագրի» համեմատական քննությամբ: Միով բանիվ՝ մենք հետևում ենք հետազոտական այն մոտեցմանը, որն անմիջական աղերսներ է տեսնում ամերիկյան հեղափոխության և Վեստֆալյան համակարգի միջև՝ շեշտադրելով ազգի ինքնիշխանության, նրա քաղաքական և քաղաքացիական կառույցների, ընկերային համայնքի անդամների անկապտելի իրավունքների և գործելառճի միջև: Հատկանշելի է միջազգային հարաբերությունների Վեստֆալյան հարացույցն իբրև ազգերի ինքնիշխանական հարաբերությունների հնարավոր միջավայր: ԱՄՆ հիմնադիր հայրերը մեկնարկում էին այդ ըմբռնումից՝ հարստացված լուսավորական մտքի ձեռքբերումներով՝ սկսյալ Ջ. Լոքքից մինչև Մոնտեսքյո: Այս լույսով՝ ԱՄՆ անկախության գործընթացը ներկայանում է իբրև բազմավեկտոր հոլովույթ, որը կարելի է բացահայտել իր դարաշրջանի գաղափարական համալիրի դիտանկյունից միայն: «Վեստֆալյան գաղափարախոսության» և «ԱՄՆ անկախության հռչակագրի» համեմատական քննությունը կարող է դառնալ ԱՄՆ կայացման պատմության կարևոր հանգրվան:

«Современная парадигма суверенитета в контексте идей Вестфальского мира и Декларации независимости США» (сравнительный анализ)

Анна Петросян

ЕГУ аспирант кафедры всеобщей истории исторического факультета

Ключевые слова: нация, идентичность, просвещение, Вестфальский мировой порядок, суверенитет, баланс сил.

Североамериканские колонии обрели независимость не только благодаря военным успехам, но и процессам формирования национальной идентичности и социокультурного развития, которые были присущи ранним этапам индустриальной эпохи. Целью настоящей статьи является проиллюстрировать этот подход посредством сравнительного анализа «Вестфальской идеологии» и «Декларации независимости США». Другими словами, мы придерживаемся подхода, который видит прямые связи между Американской революцией и Вестфальской эпистемологической системой, подчеркивая суверенитет нации, ее политические и гражданские институтов, а также неотъемлемые права и практики членов гражданского сообщества. Вестфальская парадигма международных отношений примечательна как возможная среда для суверенных отношений между странами. Отцы-

основатели Соединенных Штатов исходили из этого понимания, обогащенного достижениями мысли Просвещения, начиная с Дж. Локка и кончая Монтескье. В этом свете процесс обретения независимости США предстает как многовекторный процесс, исследование которого возможно только на фоне идейного комплекса его эпохи. Сравнительное рассмотрение «Вестфальской идеологии» и «Декларации независимости США» может стать важной вехой в истории становления Соединенных Штатов.

* * *

Ներածություն: Վեստֆալյան պայմանագրերը և Ամերիկայի անկախության հռչակագիրը կազմում են ինքնիշխանության տեսական հիմքը: Ամերիկյան հեղափոխությունն ընթացավ Վեստֆալյան սկզբունքների ազդեցությամբ: Հընթացս ինքնիշխանության տեսությունը մարմնավորվեց ժողովրդավարական գործելակերպի և գործնական քաղաքականության:

Մեկնարկելով Վեստֆալյան աշխարհակարգի հիմնարար սկզբունքներից, ներկա հոդվածը խնդիր ունի լուսաբանելու է դրանց ազդեցությունը ամերիկայն հեղափոխության գաղափարաբանության վրա: Վերլուծության արդյունքում տեսանելի կդառնա, որ ԱՄՆ անկախություն հռչակագիրը արդյունք էր այդ սկզբունքների ստեղծագործական վերաիմաստավորման: Դրան պետք է հաջորդեր ամերիկացիների ազգային ինքնության ձեւավորման գործընթացը՝ միտված ապահովելու նրանց հասարակական համախմբումը:

Վեստֆալյան և ամերիկյան փորձառությունները, չնայած ժամանակագրական եւ աշխարհագրական տարանջատումներին, միավորված էին մեկ ընդհանրական հղացքի շուրջ. իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է, իսկ պետությունը՝ նրա բնական իրավունքների պահապանը:

Վեստֆալյան համակարգի գաղափարաբանությունը: Մինչ Ֆրանսիական հեղափոխությունը, Վեստֆալյան խաղաղությունը համարվում էր եվրոպական պետությունների կայացման և իրավաքաղաքական հիմնավորման կարևոր հանգրվաններից մեկը: Այն կարևորվում էր նաև նրանց միջպետական հարաբերությունների կառուցման և զարգացման դիտանկյունից: Տարօրինակ չէ, որ մինչ 19-րդ դարասկիզբը, Վեստֆալյան գաղափարաբանությունը ներգործուն էր և իրական:

«Աշխարհակարգի միջնադարյան մոդելը կամ մինչվեստֆալյան աշխարհակարգը Եվրոպայում ներկայացվում էր իբրև քրիստոնյա ժողովուրդների հանրապետություն [Res Publica Gentium Christianorum]՝ Հռոմի պապի գլխավորությամբ»: Բրգաձև կառույցի գլուխ կանգնած էր Հռոմի պապը, իսկ մյուսները (թագավոր, կոմս, դուքս) համարվում էին վերջինիս վասալը:

1555 թվականի Աուգսբուրգի խաղաղությունը դարձավ եվրոպական միասնության հին համակարգի վերջնագիծը [Whaley, 2012, 569][1]: Խախտվել էր «ազգ-կրոնական համայնք» կապը, և դա սպառնում էր Սրբազան Հռոմեական կայսրության արտաքին ու ներքին կայունությանը: Զանազան մանր ընդհարումները 1618 թվականին վերաճեցին պատերազմի, որը հայտնի է

[1] 1555 թ. Աուգսբուրգի պայմանագիրը կնքվեց Հռոմեական սրբազան կայսրության կայսր Կարլոս 5-րդի և Շմալկալդինյան դաշինքի զորքերի միջև: Համաձայնագիրը պաշտոնապես ազդարարեց Հռոմեական կայսրությունում կրոնական երկու խոշոր ուժերի՝ Հռոմեական կաթոլիկության և լյութերական բողոքականության գոյությունը (Kampmann Ch., 2010, էջ 202):

"The Modern Paradigm of Sovereignty in the Context of the Ideas of the Peace of Westphalia and the US Declaration of Independence" (comparative examination)

«Ինքնիշխանության արդի հարացույցը Վեստֆալյան խաղաղության և ԱՄՆ անկախության հռչակագրի գաղափարների ծիրում» (համեմատական քննություն)

«Երեսնամյա պատերազմ[1]» անվանմամբ: Արտաքուստ այն կրոնական պատերազմ էր, սակայն խորքային առումով այն ուներ նաև քաղաքական համատեքստ: Դա բողոքական պետական կազմավորումների (լյութերական, կալվինական) պայքարն էր կաթոլիկների դեմ, որոնք համախմբված էին Հաբսբուրգների առաջնորդությամբ: Բողոքականներին հաջողվեց հաստատագրել իրենց իրավունքները, և պատերազմի ավարտն ազդարարող Վեստֆալյան պայմանագրերը[2] ծառայեցին որպես նոր աշխարհակարգի մեկնարկ: Հայսմ ձևավորվեց արդի պետական և միջազգային հարաբերությունները:

Պապականությունը և կայսրությունը պարտություն կրեցին, սակայն Սրբազան Հռոմեական կայսրությունը գոյատևեց մինչև Նապոլեոն Բոնապարի ժամանակներ [Кортунов, 2007, 231]: Համաշխարհային քրիստոնեական կայսրություն ստեղծելու իսպանա-ավստրիական Հաբսբուրգների փորձերը ձախողվեցին: Իսպանիան կորցրեց Եվրոպայում իր ունեցած նախկին գերիշխող դիրքը: Եվրոպայի աշխարհաքաղաքական հարաբերություններում սկսեցին մեծ դեր խաղալ ազգային պետությունները՝ արևմուտքում՝ Ֆրանսիան, հյուսիսում՝ Շվեդիան, իսկ արևելքում՝ Ռուսաստանը: Օսմանյան կայսրությունը, աստիճանաբար սկսեց կորցնել իր ռազմական և քաղաքական ազդեցությունը Եվրոպայում.

Վեստֆալի պայմանագրով հաստատվում էր քրիստոնեական համընդհանուր և հավերժական խաղաղություն, որը ենթադրում էր «համընդհանուր ներում և մոռացում» [Treaty of Westphalia: Pease Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies.]: Վերանայվեց 1555 թվականի Աուգսբուրգյան հաշտության «ում տարածքը՝ նրա դավանանքը» (cuius regio, eius religio) դրույթը: Կալվինականների իրավունքները հավասարեցվեց կաթոլիկների և լութերականների իրավունքներին, օրինականացվեց եկեղեցական հողատիրության ձևերի աշխարհիկացումը: Դրվեց դավանաբանական ազատության գաղափարը:

Վեստֆալյան համակարգը հանդես եկավ որպես ազգերի ինքնիշխանության հաստատագրման հանգրվան: Ճանաչվեցին Նիդերլանդների և Շվեյցարիայի ինքնիշխանությունը: Ամրապնդվեց այն համուզմունքը, որ միայն համաեվրոպական կոնգրեսը կարող էր վավերացնել պետությունների ստեղծումը կամ վերացումը:

---

[1] 1618-1648 թթ. պատերազմը, ընթացավ երկու խմբավորումների միջև. Կաթոլիկ խմբավորումը՝ Սրբազան Հռոմեական կայսրության կաթոլիկ իշխանություններ, Պապական պետություն, Իսպանիա, Պորտուգալիա և այլն, որոնց առաջնորդում էին Ավստրիայի Հաբսբուրգները: Նրանց դեմ պայքարում էր բողոքական դաշինքը՝ Գերմանիայի բողոքական իշխանությունները, Դանիան, Շվեդիան, կաթոլիկ Ֆրանսիան(1635 թվականից) և այլ պետություններ:

[2]Կոնգրեսը հաստատեց երեք խաղաղ պայմանագրեր. 1. 1648 թ. հունվարի 30- կնքվեց Իսպանիայի և Նիդերլանդների միջև, ավարտվեց «Ութսունամյա պատերազմը»: 2. 1648 թ. մայիսի 15- Օսնաբրուկում, կայսեր և Շվեդիայի միջև : 3. 1648 թ. հոկտեմբերի 24- Մյունստերի պայմանագիր, կայսեր և Ֆրանսիայի միջև:

Վեստֆալի պայմանագրով ձևավորվեց աշխարհակարգի և միջազգային իրավունքի նոր հարացույց և համակարգ՝ հիմնված երեք հիմնական սկզբունքների վրա՝ ա. պետական ինքնիշխանության, բ. ինքնիշխան պետությունների իրավահավասարության, գ. ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու պարտավորություն [Croxton, 1999, 569]: Այս կերպ միջնադարյան «տոտալիտար» համակարգին փոխարինեց «դեմոկրատականը»: Հուգո Գրուտիուսը, որի աշխատությունները նշանավորվում են ինքնիշխանության արդի հասկացության սկիզբը, որի ծիրում կարևորում է ազգ-պետությունների ձևավորվելու գործընթացը:

Ամփոփելով ասվածը, նշենք որ 1618-1648 թվականների Երեսնամյա պատերազմը և հաջորդած Վեստֆալյան համաձայնագիրը նախանշեց նոր աշխարհակարգի մեկնարկ: Այդ աշխարհակարգը ի տարբերություն միջնադարյանի, արտացոլում էր ամբողջովին նոր իրողություններ. այստեղ այևս չկա բարձրագույն համընդհանրական իշխանություն [Եփրեմյան, 2014, 224]: Միջազգային գլխավոր կարգավորիչը այսուհետ հավասարակշռության սկզբունքն էր [Зонова, 2008, 70-80]: Ձեևավորված ազգային պետությունները այլեևս ազատ էին վարելու իրենց ինքնիշխանությունից բխող արտաքին քաղաքականություն:

Հետազոտողները գտնում են, որ Վեստֆալի արդյունքներով իր ավարտին հասավ «պետականաշինության պատերազմը». եթե մինչև 1648 թվականը Եվրոպայում պատերազմում էին միապետները, ապա այժմ՝ պետությունները, որոնք էլ սկսեցին դառնալ «պատմության հիմնական գործող անձերը»: Ավելին՝ սկսեցին ձևավորվել ազգային պետությունները, և այս գործընթացի տոն էր տալիս ազգային ընտրախավը՝ ազնվականությունը [Եփրեմյան, 2015, 45]:

Մի հատկագիծ ևս. ավարտվեցին, այսպես կոչված, «կրոնական պատերազմները»: Նոր համակարգը փոխեց պատերազմի պատճառների, դրանց ռազմավարական ու մարտական միջոցների մասին պատկերացումները: Պատերազմի և խաղաղության հարցերն այժմ որոշվում էին համաձայն միապետների և նրանց արքունիքների կողմից ձևակերպված «ազգային շահերի» հղացքի: Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության մեջ նրանք արդ օգտագործում էին պրոֆեսիոնալ բանակը: Նպատակն էր՝ ոչ թե ոչնչացնել հակառակորդին, այլ՝ հաստատել և պահպանել ուժերի հավասարակշռություն [Herring, 2008, 13]:

ԱՄՆ անկախության հռչակագրի հիմնական հասկացությունները: 18-րդ դարի ավանդական միապետական հասարակությունների և դրանց ներհատուկ պատրիարքալ եւ կախյալ հարաբերությունների քայքայումը նախապատրաստեց 19-րդ դարի սկզբի լիբերալ–կապիտալիստական աշխարհի ի հայտ գալու հեռանկարը: [Gordon, 1991, 121, 123]: Այս բեկումային ընթացքի ժամանակ էլ սկսեց ձևավորվել ամերիկյան ազգային ինքնության հղացքը, որի խթաններից առավել ներգործուն էր քաղաքական միտքը: Այն համաբերված էր ազգային անկախության և հեղափոխության հիմնագաղափարի շուրջ:

1760-1775 թթ. ամերիկյան քաղաքական մտքի սևեռումներից էր հեղափոխության գաղափարական հիմնավորումը: Անկախությունից առաջ արված հրատարակությունները դրա վառ դրսևորումներն են: Հրատարակված երկասիրությունները, քարոզները, ելույթները, նամականին, բանավեճերը պարունակում էին այս ծրագրի հիմնատարրերը: [Bailian, 1967, 21]: Այսպես, ամերիկյան հեղափոխական միտքը անցավ սկզբնական հասարակական արթնացման եւ լուսավորման ճանապարհը: Ամերիկյան ժողովուրդը հասունանում էր, արտահայտվում էր այն զգացողությունը, որ ունեն իրենց սեփական ճակատագիրը:

"The Modern Paradigm of Sovereignty in the Context of the Ideas of the Peace of Westphalia and the US Declaration of Independence" (comparative examination)

«Ինքնիշխանության արդի հարացույցը Վեստֆալյան խաղաղության և ԱՄՆ անկախության հռչակագրի գաղափարների ծիրում» (համեմատական քննություն)

1740 թվականից հետո գաղութաբնակների ինքնագիտակցությունը, որպես ամերիկացիներ, զորացավ: Մոտ քսան տարի անց, գաղութաբնակները, որ տակավին անորոշ էին սոցիալական ու մշակութային իմաստներով, արդ պատրաստ էին բաժանվել Բրիտանիայից [Degler, 1984, 78]:

Ամերիկյան հեղափոխությունը պետք է դիտարկել Վեստֆալյան աշխարհակարգի սկզբունքների եւ ազգերի ինքնորոշման իրավունքի հարացույցի շրջանակներում: Եվ մեր խնդիրն է դրանց լույսով մեկնաբանելու նորդարյա ամերիկյան կարեւորագույն փաստաթուղթը՝ «Անկախության հռչակագիրը»՝ սևեռվելով վերջինիս երեք հիմնագաղափարի վրա՝ ինքնորոշման իրավունք, ընկերային համաձայնություն և անկախություն և ուժերի հավասարակշռություն:

ա. *Ինքնորոշման իրավունք*

Ամերիկացի տեսաբան Թոմաս Փեյնը, ում գաղափարները կարևոր դեր խաղացին ամերիկյան պետականության հիմնավորման գործում, առաջիններից էր, որ տեսականացրեց անկախացման պահանջը՝ հիմնավորելով դա աշխարհագրական, բնական եւ աստվածային դիտանկյուններից. «*Անհեթեթ է, որ մայրցամաքը մշտապես կառավարվի կղզու կողմից*», եւ նույնիսկ «[…]*այն հեռավորությունը, որը ամենակարող Տերը դրել է Անգլիայի եւ Ամերիկայի մեջ, ամուր ու օրինական ապացույց է, որ մեկի իշխանությունը մյուսի նկատմամբ, հիմնված չի դրախտային համընկնումի վրա*» [Foner, 1945, 21, 24]:

Անկախացման գաղափարը իր արտահայտությունն էր գտել նաեւ անգլիացի քաղաքական գործիչ ու փիլիսոփա Էդմոն Բըրքի պահպանողական ճառերում: Նա գտնում էր, որ միասնական ընհանրությունների բացակայությունը անխուսափելիորեն կհանգեցնի համերաշխության փլուզման ու ամերիկյան անկախության. «[…] *եթե բացահայտվի, որ մեր կառավարությունը կարող է լինել մեկ բան, իսկ նրանց իրավունքները՝ մեկ այլ, եւ որ այս երկուսը կարող են գոյություն ունենալ առանց որևէ փոխադարձ կապի, ապա կապակցումը կվերանա, միասնությունը կթուլանա ,և ամեն ինչ կտանի դեպի անկում և լուծարում*» [Burke, 1898, 119]: 1774 թ. ապրիլի 19-ի իր ելույթում Բըրքը ընդգծում է ամերիկյան ազատության՝ բնական «որդիական» իրավունքը. «*Նրանք «մեր երեխաներն» են, […] բայց երբ զավակը հաց է խնդրում, մենք չպետք է նրան քար տանք, երբ ցանկանում է ձուլվել իր ծնողին և իսկական որդիական նմանությամբ արտացոլել բրիտանական ազատության գեղեցիկ դեմքը, արդյո՞ք մենք պետք է նրանց դիմենք մեր սահմանադրության ամոթալի մասերով, արդյո՞ք մենք պետք է նրանց տանք մեր թուլությունը*» [Burke, 1774, 63]*:*

Անկախության հռչակագիրը բխում էր նաև լուսավարականության առաջադրած հասարակական պայմանագրի [Locke, 1823, 140][1] (social contract) եւ մարդկանց հավասարության տեսություններից: Տվյալ հարցերում այն զարգացնում էր Վեստֆալի (տակավին աղոտ) սերմերն

[1] Սկսվելով ընտանիքից, որպես ամուսնու եւ կնոջ միջեւ հարաբերությունների կարգավորում, այն անցում է կատարում հասարակություն, որն առաջին անգամ միավորում է իրենց: Ոչինչ անհրաժեշտ չէ այդ հասարակությանը , որն չի սպասարկում այն նպատակները, որոնց համար ստեղծված է այն (Locke J., 1823, էջ 140):

առ այն, որ իշխանությունը բխում է ժողովրդի կամքից: Սա ամերիկյան անկախության կարևորագույն իրավական հիմնավորումներից էր: «Անկախության հռչակագրով» ամրագրվեց հետեւյալը. «*Մենք կարծում ենք, […] որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար, որ նրանք իրենց Արարչից օժտված են անօտարելի իրավունքներով, որոնցից են Կյանքը, Ազատությունը և Երջանկության ձգտումը: Որ այդ իրավունքները ապահովելու համար կառավարություններ են ստեղծվում՝ որոնց արդար լիազորությունները բխում են կառավարվողների համաձայնությունից: Որ ամեն անգամ, երբ կառավարման որևէ ձև կործանարար է դառնում՝ Ժողովրդն իրավունք ունի այն փոխել կամ վերացնել և ստեղծել նոր կառավարություն՝ ըստ այնպիսի սկզբունքների, իրավասությունները և ձևերի, որոնք ամենայն հավանականությամբ կգորացնեն իր անվտանգությունն ու երջանկությունը»:*

բ. *Ընկերային համաձայնություն և անկախություն*

Վեստֆալյան պայմանագրով սահմանվում էր անկախ պետությունների իրավահավասարությունը եւ ներքին հարցերին չմիջամտելու սկզբունքը: Սակայն ամերիկյան գաղութաբնակներն այս ճանապարհին դեռ պետք է անցնեին երկար փորձությունների միջով:

Գաղութաբնակները վաղուց հեռանում էին մայր երկրի նկատմամբ իրենց հավատարմությունից: Այս գորընթացի արագացման կամ դանդաղացման վրա էապես ներազդում էին ոչ միայն ներքաղաքական, այլ նաև արտաքին ազդակները: Այս ասելով նկատի ունենք նախ և առաջ ֆրանս–բրիտանական 1756-1763 թվականների պատերազմը: Այն ավարտվեց ֆրանսական կողմի պարտությամբ, և այս գործում մեծ էր գաղութաբնակների ներդրումը. բրիտանական կառավարությանը հաջողվեց նրանց ներգրավել «շնորհիվ հայրենասիրական մղումների»: Եվ նրանք անգամ սկսեցին երևակայել, թե ի զորու են դառնալու կայսրության լիիրավ գործընկեր [Herring, 2008, 14][1]: Բրիտանական խերհրդարանին ուղղված իրենց ուղերձում նրանք հատկանշում էին. «*Ուրեմն իմացե՛ք, որ մենք պնդում ենք, որ պետք է լինենք նույնքան ազատ, որքան մեր համախոհները Բրիտանիայում, եւ որեւէ երկիր իրավունք չպետք է ունենա խլելու մեր ունեցվածքը եւ իրավունքները՝ առանց մեր համաձայնության*» [Journals of the Continental Congress, 1904, 82]:

Անկախության հռչակագրի մի էական հատված էլ ներկայացնում է Վեստֆալյան հիմնարար դրույթների խախտման նախադեպերը: Հապացույց՝ «ի տես արդարամիտ աշխարհի», գաղութաբնակները ներկայացնում են իրավախախտումները.

- Արգելքը նահանգային ներկայացուցչական մարմինների գործունեության եւ նրանց կողմից օրենքների ընդունման նկատմամբ,
- Նահանգների բնակեցման եւ ներգաղթի խոչընդոտումը, նաև գաղութների տարածքում մշտական զինված բանակի տեղակայումը,

[1] Մեծ Բրիտանիայի ժողովրդին ուղղված հերթական ուղերձում, ասվում է. «*Եթե դուք հաշվի չեք առնում այն կապը, որը դարեր շարունակ գոյություն է ունեցել մեր միջեւ, եթե մոռացել եք վերքերը, որոնք մենք ստացել ենք ձեր կողքին կռվելով՝ կայսրության համար…արդարությունը, մարդկությունը կորցրել են իրենց ազդեցությունը ձեր սրտերում:*
Ամպ է կախված մեր գլխին…»
(Journals of the Continental Congress, 1774-1789, Vol. II (1775), 1904, էջ 170)

- Արդար դատական համակարգի բացակայությունը, պետական պաշտոններում կոռումպացված եւ ոչ բանիմաց անձանց նշանակումը,
- Հարկերի անընդհատ բարձրացումը,
- Առեւտրային մեկուսացումը աշխարհից,
- Հրաժարումը գաղութների պաշտպանության պարտավորությունից [Ստեփանյան, 2017, 9-15]:

Անկախության հռչակագրի հեղինակները [և առաջին հերթին՝ Թ. Ջեֆերսոնը) վստահ էին այդ փաստաթղթի բացառիկ բնույթի մեջ: Ավելին, նրանք այն համարում էին անցյալի ականավոր մտածողների ստեղծագործ ոգորումների պսակը՝ սոցիալական գործընկերության, արդարադատության, իրավունքի և ազատության հիմնական խնդիրների վերաբերյալ [Stepanyan, 2017, 21]: Հռչակագիրը հեղափոխության սկիզբն էր միայն: Նրա ծավալման և հաղթանակի համար անհրաժեշտ էին տևական պատերազմ և դիվանագիտական ջանքեր:

գ. *Ուժերի հավասարակշռություն*

Բրիտանա-ամերիկյան պատերազմի արդյունքում, ուժերի հավասարակշռության Վեստֆալյան մոդելը Եվրոպայից տարածվեց դեպի Ամերիկա: Պատերազմում հնարավոր գործընկերների որոնումը ամերիկացիներին մղեց ակտիվ արտաքին քաղաքականության [Herring, 2008, 16][1]: Նրանք գտնում էին, որ հաղթանակին հետամուտ՝ գաղութաբնակներն իրավունք ունեն դիմելու միջազգային դատարան՝ դիտարկելով այն որպես անկախության արդարացման կարևորագույն պաշտոնական հաստատություն: Իր նամակներից մեկում Թ. Ջեֆերսոնի հատկագծում էր. «[…] *երբ ստիպված էինք դիմել զենքի՝ համաշխարհային դատարան դիմելը համարվում էր պատշաճ միջոց մեր գործն արդարացնելու համար: Սա Անկախության հռչակագրի նպատակն էր՝ միտված մարդկությանը ներկայացնելու մեր ձգտման արդարացիությունը*» [“From Thomas Jefferson to Henry Lee, 8 May 1825]:

---

[1] Արտաքին քաղաքական դաշտում առկա էր երկու հիմնական մոտեցում.

- Մեծ Բրիտանիայի հետ հակասությունների հարթում, քանի որ երկրի պաշտպանության հարցում անարդյունք կլիներ Ֆրանսիական եւ երվրոպական այլ երկրների տարածքային պահանաջների դեմ միայնակ պայքարը, որը անխուսափելիորեն տեղի էր ունենալու առանց բրիտանական հովհանավորության (Journals of the Continental Congress, 1904, p. 46):
- ֆրանսիական եւ շոտլանդական լուսավորական փիլիսոփաների ազդեցությամբ, պարզորեն բացատրում էին Ամերիկայի ազատ ու անխափան առեւտրի առաջնահերթությունը եւ դերը ապագա միջպետական հարաբերություններում: Բոլոր ազգերի հետ հավասար հիմունքներով առեւտուր անելու հնարավորությունը համարվում էր իրենց լավագույն շահերից եւ կարեւոր իրենց տնտեսական բարեկեցության համար: Անկախությունը թույլ կտա աշխարհի հետ «սեղմել ձեռքերը», ապրել խաղաղության մեջ եւ ազատ առեւտուր անել ցանկացած շուկայի հետ:

  Մերկանտիլիզմի եւ ուժային քաղաքականության փոխարինումը ապրանքների ազատ փոխանակմանը, կհանգեցնի ավելի խաղաղ աշխարհի ստեղծման: Մեկ ազգի հարստության աճը կբերի զարգացում բոլորի համար: Հետեւաբար, ազգերի շահերը ավելի շուտ համատեղելի են, քան հակադրական: Բացի այդ առեւտրային շփումները կխթանեն ազգերի միջեւ ներդաշնակության հաստատմանը (Herring G., 2008, էջ 16):

Ասվածի դիտանկյունից հույժ կարևոր էր նաև Մեծ Բրիտանիայի հակառակորդների հետ դաշնակցային հարաբերությունների կառուցումը։ Ֆրանսիան, որը վերջին պատերազմում պարտվել էր Մեծ Բրիտանիային, եւ ցանկանում էր թուլացնել նրան՝ դարձավ Ամերիկյան անկախության գլխավոր հովանավորը [Herring, 2008, 15]։ Այս մերձեցումը ենթադրում էր կողմերի համաձայնություն առեւտրի, քաղաքականության, պատերազմավարության և դիվանագիտության ասպարեզներում։ Շուտով դրան պետք է միավորվեին նաև հակաբրիտանական «չեզոք երկրները»։

Սա արդեն պատերազմ էր ոչ այնքան ռազմական գործողությունների, որքան դիվանագիտական ջանքերի։ Եվ տարօրինակ չէ, որ ռազմական հաջողություններից հետո, Միացյալ Նահանգները պետք է ձգտեր վերականգնել հարաբերությունները Բրիտանիայի հետ՝ նրանում [և ոչ Ֆրանսիայում և «դաշնակից պետություններում») տեսնելով իր ապագա անվտանգության հիմնական երաշխավորին [Herring, 2008, 28]։

1783 թ. Փարիզի պայմանագրով ԱՄՆ–ը «փափկացրեց» իր հարաբերությունները Բրիտանական տերունական համակարգի նկատմամբ։ Եվ ինքնիշխանության հաստատագրումը փոխեց նախկին մայր երկրի հետ նրա հարաբերությունների դինամիկան։ Գլխավոր պայմանը ԱՄՆ անկախության էր։ Այսուհետ նրա ներկայությունը եվրոպայում ուժերի հավասարակշռության համաձիրում աներկբա էր [Kaplan, 1983, 12-13]։

Վեստֆալյան գաղափարաբանությունը ներկայացնում էր ազգ–պետության՝ քաղաքական ազգային ինքնության, ձևավորման գործընթացի սկիզբը։ Ամերիկյան գաղութաբնակների միջավայրում նույնպես այս գաղափարը ելակետային էր և պետք է ընթանար մի քանի շրջափուլերով՝ դեպի էթնիկ ինքնության հանգրվանը։ Անկախության հռչակագրի (և ապա Սահմանադրության) «*Մենք, Միացյալ Նահանգների ժողովուրդը...*» բանաձևը հենց այս հանգրվանն էր ներկայացնում։ Ա. Համիլթոնը 1787 թ. նկատեց, որ «*Ամերիկայի շահերին ավելի շատ կնպաստի, եթե հանուր նպատակների համար լինի մեկ ազգ՝ մեկ դաշնային կառավարության ներքո*» այլապես անջատումը անխուսափելի կլինի [Hamilton, 1787]։ Ջ. Ջեյը արդեն իսկ ընդգծում է ամերիկյան ազգի լինելիության գաղափարը. «*բոլոր նպատակների համար մենք միասնություն ենք եղել. յուրաքանչյուր քաղաքացի ամենուրեք վայելել է նույն ազգային իրավունքները, արտոնությունները և պաշտպանությունը։ Որպես ազգ՝ մենք պատերազմել և խաղաղություն ենք կնքել, որպես ազգ՝ մենք հաղթել ենք մեր ընդհանուր թշնամիներին, որպես ազգ՝ մենք դաշինքներ ենք կնքել, պայմանագրեր ենք կնքել օտարերկրյա պետությունների հետ*» [Jay, 1787]։ 1796 թ. իր հրաժեշտի ուղերձում, Ջ. Վաշինգթոնը հատկանշեց ամերիկյան ազգի գաղափարը, որպես արդյունք ընտրություն եւ ոչ թե ծագման. *«ամերիկացի անունը, որը պատկանում է ձեզ,միշտ պետք է բարձրացնի հայրենասիրության արդար հպարտությունը՝ավելի շատ, քան տեղական խտրականություններից բխող ցանկացած անվանում»* [Washington, 1796, 6]։ Սա ազգային ինքնության հստակ ընկալում էր պարունակում։ Այն պետք է դառնար ԱՄՆ պատմության հիմնական գործող [ընդհանրական) անձը։

Ամփոփում։ Վեստֆալյան խաղաղությունն ամրապնդեց ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքը՝ ճանաչելով պետությունների ինքնիշխանության ու հավասարության դրույթը, առանց արտաքին միջամտության։ Ամերիկյան անկախության հռչակագրով, այս համակարգը տեղափոխվեց Ամերիկա մայրցամաք, նոր լիցք հաղորդելով դրան, որպես նոր ծնվող ազգի ձայն։ Ազդվելով 17-րդ դարի փիլիսոփայությունից, այն վերաճեց

քաղաքական ուղենիշի՝ ազգին վերապահելով ոչ միայն իրավունք, այլ նաեւ իշխանության աղբյուր լինելու լիազորություն:

Վեստֆալիայից հետո դիվանագիտությունն ու պատերազմը անցան քաղաքացիական, այլ ոչ թե կրոնական իշխանության իրավասության ներքո: Հետայսու պետությունները դառնում էին քաղաքական գլխավոր սուբյեկտ, իսկ ազգային շահը գործողությունների արդարացման հանգրվան: Բանակը դարձավ ոչ միայն պատերազմ մղող ուժ, այլ հակառակորդին զսպող միջոց: Համաշխարհային քաղաքականության հիմքը դարձավ ուժերի հավասարակշռությունը եւ դիվանագիտական հմուտ աշխատանքը:

1765-1776 թվականների հեղափոխական ճգնաժամի իրականացման հռետորաբանությունն ու շրջանակը բխում էին այն քաղաքական ու սոցիո-մշակութային ձևերից, որոնք ամերիկացիները զարգացրել էին դեռեւս նախորդ դարում: Ներկայացուցչական ժողովների, տեղական ինքնակառավարման, հողերի յուրացման, մասնավոր սեփականության, կրոնական արժեհամակարգի, հաղորդակցության ուղիների բարելավման, կրթական մակարդակի բարձրացման եւ այլնի շնորհիվ սկսվեց առավել ցայտուն դառնալ ամերիկյան այլությունը բրիտանականից:

Անկախության հռչակագիրը Ամերիկայի ծննդյան վկայականն էր՝ բոլոր իմաստներով: Ներկայացված հիմքերը պատմական չէին՝ ամերիկյան ժողովրդի հնությունը ընդգծելու համար, ելակետը մարդկային հավասարության եւ հասարակական պայմանագրի լուսավորական տեսություններն էին, որպես արդարացման կերպ, եւ այն բոլոր դժգոհությունները, որոնք բերեցին այս բացարձակ ճշմարտության ընդունմանը: Հռչակագիրը ակտիվ արտաքին քաղաքականության, դաշնակցային եւ առեւտրային հարաբերությունների կայացման օրինականությանը միտված փաստաթուղթ էր:

Վեստֆալյան համակարգը եւ Ամերիկայի անկախության հռչակագիրը նոր իրողություն էին համաշխարհային պատմության մեջ, կանգնած պատմության ջրբաժանին, իբրեւ ազգային պատկերացումների ամբողջացում, որոնց փոխկապակցված պատճառահետեւանքը կդառնա կայսրությունների փլուզումը: Այս երկու փաստաթղթերը ներկայանում են իբրեւ պատմական ընթացք, որի վերջնարդյունքը պետության ու ժողովրդի փոխադարձ իրավունքների ճանաչումն ու արդի միջազգային իրավունքի հիմքն է:

References

Burke E. (1774). The Works of The Right Honourable, Vol. II. London, p. 592.

“From Thomas Jefferson to Henry Lee. (8 May 1825). ” Founders Online, National Archives, https://teachingamericanhistory.org/zskl [14.06.25).

Hamilton A. (1787). Federalist No. 1. In The Federalist Papers. Library of Congress. https://guides.loc.gov/federalist-papers/text-1-10 [15.07.2025).

Journals of the Continental Congress, 1774-1789, Vol. I (1774), (1904), Washington: Government Printing Office, p. 163.

Journals of the Continental Congress, 1774-1789, Vol. II (1775), (1904). Washington: Government Printing Office, p. 256.

Jay J. (1787). Federalist No. 2. In A. Hamilton, J. Madison, & J. Jay, . The Federalist Papers. Library of Congress. https://guides.loc.gov/federalist-papers/text-1-10 (15.07.2025)

Locke J. (1823). Two Treatises of Governmanet. New York University Press, p. 216.

The Complete. Writings of Thomas Paine, Philip S. Foner, ed. (New York: Citadel Press,. 1945), p. 632.

Treaty of Westphalia: Pease Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies , https://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp , (20.05.25).

Washington G. (1796). Washington's Farewell Adress to The People of The United States, p. 26.

AMN ankakhut'yan hrrch'akagir-240. (2017). « Taregirk' Mijazgayin gitazhoghovi hodvatsneri zhoghovatsu. Yerevan: «Zangak» hrat., 205 ej.

Yep'remyan T. (2014). Vestfalyan ashkharhakargi dzevavorman patmut'yunits'. Patmut'yun yev mshakuyt' hayagitakan handes, ej 219-227.

Yep'remyan T. (2015). Vestfalyan hamakargy ibrev ardi yevropakan k'aghak'akanut'yan shrjadardzayin hangrvan , Banber Yerevani hamalsarani, ej 31-47.

Bailian B. (1967). The Ideological Origins of American Revolution. Cambridge: Beknap Press. p. 305.

Croxton D. (1999). The Peace of Westphalia of 1648 and the Origins of Sovereignty, The International History Review: Vol. 21, No. 3, pp. 569-591.

Degler C. (1984). Out of Our Past: The Forces That Shaped Modern America. New York: Harper & Row. p. 648.

Gordon W. (1991). The Radicalism of The American Revolution. New York: Vintage, p. 557.

Herring G. (2008). From Colony to Superpower: US Foreign Policy since 1776. Oxford: Oxford University Press, p. 1056.

Kaplan L. (1983). The Treaty of Paris, 1783: A Historiographical Challenge. The International History Review, Aug., Vol. 5, pp. 431-442.

Kampmann Ch. (2010). Peace Impossible? The Holy Roman Empire and the European State System in the Seventeenth century. «War, the State, and International Law in Seventeenth-Century Europe», Farnham, Burlington: Ashgate Publishing, pp. 197-210.

Whaley J. (2012). Germany and the Holy Roman Empire, Volume 1. From Maximilian to the Peace of Westphalia 1493-1648,. Oxford: Oxford University Press, p. 752.

Zonova T.V. (2008). Vestfal'skaya sistema. Moskva, c. 78-80.

Kortunov S.V. (2007). Krusheniye Vestfal'skoy sistemy i stanovleniye novogo mirovogo poryadka. Moskva: Bezopasnost' Yevrazii 4, c. 230-260.